

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Զավեն Գառնիկի Մարգարյան

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
(ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում

Գիտական ղեկավար՝

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Աշմատի Հակոբյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Վարազդատի Մաթևոսյան**

**Տնտեսագիտության թեկնածու
Հայկ Խաչիկի Մանասեյան**

Առաջատար կազմակերպություն՝

**Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի փետրվարի 26-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի հունվարի 26-ին:

014 մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Տ.Ս. Մարտիրոսյան

Արենախոսության թեմայի արդիականությունը

ՀՀ բանկային համակարգի զարգացումն անխուսափելիորեն կապված է համաշխարհային նոր միտումներին հարմարվելու կարողության, ինչը ենթադրում է ֆինանսական ինստիտուտների գործառույթների արմատական վերափոխում՝ բանկերի ֆինանսական արդյունքները միասնացնելով կայուն զարգացման սկզբունքների հետ: Դա, նախ և առաջ, նշանակում է կազմակերպությունների, այդ թվում՝ բանկերի ռազմավարական պլանավորման և գործառնական գործունեության մեջ՝ արդյունքների գնահատման ընդհանուր համակարգում, որպես հիմնական ուղղություն, ներմուծել կայուն զարգացման հայեցակարգը՝ ըստ ԲՍԿ (բնապահպանական (Environmental), սոցիալական (Social) և կառավարման (Governance)) մոտեցման:

Ելնելով վերոնշյալից՝ ներկայացվող հետազոտության արժեքը պայմանավորված է հետևյալով. թեև մասնագիտական գրականության մեջ պատշաճ կերպով լուսաբանված են առևտրային կազմակերպությունների ֆինանսական արդյունքների տեսամեթոդական հիմքերը, այնուամենայնիվ, փոքր թիվ են կազմում այն աշխատությունները, որոնք նվիրված են կոնկրետ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծությանը՝ ըստ տեսամեթոդական հիմքի և առանձնահատկությունների, առավել ևս, այլ առևտրային բանկերի ու առևտրային կազմակերպությունների հետ համեմատության համատեքստում: Մասնավորապես՝ հայալեզու գրականության մեջ գրեթե բացակայում են այն աշխատությունները, որտեղ ուսումնասիրվում են առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների առանձնահատկություններն ըստ տեղայնացված մոտեցման: Մինչդեռ խնդրի հետազոտությունն այս դիտանկյունից ոչ միայն կարող է ամբողջապես վերափոխել կառավարման պատասխանատվության օրակարգը, այլև վերաձևակերպել ֆինանսական կազմակերպությունների արդյունավետության գնահատման հիմքը: Թեև հայաստանյան բանկերը «ձևականորեն» համապատասխանում են մի շարք նորմատիվ պահանջների, ԲՍԿ ցուցանիշների համակարգային ինտեգրման մակարդակը ներքին գործընթացներում՝ արդյունավետության գնահատման և որոշումների կայացման շրջանակում դեռևս մնում է ցածր: Մասնավորապես՝ բացակայում է միասնական ստանդարտացված մեթոդաբանությունը, որը կարող է հնարավորություն ընձեռել ԲՍԿ պարամետրերը ներառելու շահութաբերության, կապիտալի արժեքի և ակտիվների որակի վերլուծության մեջ: Դա սահմանափակում է ինչպես շահագրգիռ կողմերի կողմից արտաքին գնահատման, այնպես էլ բանկերի ներսում ռազմավարական պլանավորման հնարավորությունները: Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է այն արմատական վերափոխումներով, որոնք տեղի են ունենում համաշխարհային ֆինանսական համակարգում, որտեղ ԲՍԿ գործոնները վերածվում են առևտրային բանկերի գործունեության արդյունքների գնահատման անբաժանելի տարրերի, և չնայած նրան, որ որոշ հետազոտողներ անդրադարձել են այս խնդրին, բայց անհրաժեշտություն կա մշակելու և առաջ քաշելու մոտեցումներ, որոնք կբարձրացնեն նաև ԲՍԿ գործոնների գնահատման արդյունավետությունը՝ դրանց տալով որոշակի չափելիություն: Առևտրային բանկերի ֆինանսական

արդյունավետության գնահատման համակարգում ԲՍԿ մոտեցումների ինտեգրման խնդիրը մակրոտնտեսական կարգավորման, ռիսկերի կառավարման և կայուն զարգացման հատման կետում է, որը գիտագործնական կարևոր նշանակության հիմնահարց է, իսկ լուծումը պահանջում է համալիր հետազոտություն, կիրառական գործիքակազմի մշակում և միջազգային փորձի հարմարեցում՝ հաշվի առնելով ազգային բանկային համակարգի առանձնահատկությունները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ ընդգծվում է թեմայի արդիականությունը, իսկ առաջ քաշված խնդիրների լուծման անհրաժեշտությունը խոսում է դրա արդյունքների կիրառման կարևորության մասին:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Հետազոտության նպատակն է՝ ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման մոտեցումների գիտական ուսումնասիրմամբ դրանց կատարելագործման տեսական և կիրառական ուղիների մշակումն ու հիմնավորումը, այդ թվում՝ ԲՍԿ գործոնների շեշտադրմամբ, որոնք միտված են ֆինանսական վերլուծության, բանկային ռիսկերի կառավարման և կառավարչական հաշվետվողականության համակարգում կայուն զարգացման սկզբունքների ինտեգրմանը: Այս նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ֆինանսական արդյունքների գնահատման տեսամեթոդական, ֆինանսատնտեսագիտական մեկնաբանություններն ու առանձնահատկություններն առևտրային բանկերում,

- բացահայտել և ներկայացնել առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման հիմնախնդիրները, ցուցանիշները, մեթոդները, տեղեկատվական աղբյուրները,

- մեկնաբանել առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա ազդող գործոնները,

- կատարել ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների կազմի և կառուցվածքի վերլուծություն,

- բացահայտել ֆինանսական ծառայությունների՝ շահույթի վրա ազդող քանակական գործոնների գնահատման հիմնախնդիրները,

- ներկայացնել առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների ձևավորման վրա ազդող որակական գործոնների գնահատման հիմնախնդիրները,

- կատարված հետազոտությունների հիման վրա՝ առաջարկել գնահատման մեթոդների բարելավման ուղիներ, ինչպես նաև ԲՍԿ գործոնների միասնացում ֆինանսական գնահատմանը:

Հետազոտության օբյեկտը և առարկան

- Հետազոտության օբյեկտը ՀՀ առևտրային բանկերի ու բանկային խմբերի ֆինանսական արդյունքների գնահատման համակարգն է, իսկ առարկան՝ բանկերի գործունեության արդյունքներն ու կայուն զարգացումն ապահովող ֆինանսական, բնապահպանական, սոցիալական և կառավարման գործիքակազմն ու մեթոդաբանությունն են, ներառյալ ԲՍԿ ներդրման հասունության մակարդակի և ֆինանսական արդյունավետության փոխկապակցվածությունը:

Հետազոտության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը

Հետազոտության համար տեսական և տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտի վերաբերյալ հայրենական ու արտասահմանյան հեղինակների աշխատություններն ու վերլուծությունները, գիտական հրապարակումներում տեղ գտած տեսական և մեթոդական դրույթները, կիրառական հետազոտությունների նյութերը, ՀՀ ԿԲ պաշտոնական վիճակագրական տվյալները, բանկերի ֆինանսական արդյունքների և կայուն զարգացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները: Կիրառվել են համակարգային, մոդելային և փորձագիտական վերլուծության մեթոդներ, որոնց շրջանակներում էլ կատարվել է ԲՄԿ գործոնների ինտեգրման կառուցակարգերի գիտական հետազոտությունն ու գործնական մոդելավորումը ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման համակարգում:

Հետազոտության հիմնական արդյունքը և գիտական նորույթը

Հետազոտության հիմնական գիտական արդյունքը ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման գործընթացի բարելավման և կատարելագործման ուղիների մշակումն է՝ ֆինանսական, ԲՄԿ և հաշվետվողական թափանցիկության գործոնների շեշտադրմամբ, որտեղ որպես գիտական նորույթ ներկայացված են հետևյալները.

- մշակվել է առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների և կայուն զարգացման ինտեգրված գնահատման մոտեցում՝ ինչպես քանակական, այնպես էլ որակական առումներով հաշվի առնելով արտաքին և ներքին տնտեսաիրավական ազդեցությունները, արժևորելով ԲՄԿ գործոնների կարևորությունը,
- մշակվել և հիմնավորվել է ԲՄԿ ակտիվների ռիսկով կշռված չափերի (ԲՄԿ-RWA) գործակիցը՝ որպես ֆինանսական արդյունքների բազմագործոնային գնահատման գործիք՝ կայուն զարգացման համատեքստում,
- մշակվել և առաջ է քաշվել բանկային գործունեության ֆինանսական արդյունքների ներքին հաշվետվողականության և կատարողականի գնահատման մոտեցում (KPI-ների վահանակ)՝ թիրախավորված ԲՄԿ-ԿՄՊ ցուցանիշներում, որոնք հիմնավորում են կառավարչական որոշումների ընդունումը,
- մշակվել և ներկայացվել է վերահսկողական հաշվետվողականության մոտեցում՝ ուղղված ԿԲ - առևտրային բանկեր փոխգործակցության համապարփակ և բազմագործոնային գնահատման հնարավորությանը՝ ԲՄԿ գործոնների գնահատման համատեքստում:

Հնարագործության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը

Հետազոտության շրջանակում՝ հայաստանյան գիտական միջավայրում, առաջարկվում է կիրառել բանկերի ֆինանսական արդյունքների գնահատման համալիր մոտեցում՝ հիմնված ԲՄԿ գործոնների հաշվառման վրա, ինչը հնարավորություն կտա դուրս գալ ավանդական, բացառապես քանակական չափիչներին ուղղված հարացույցից: Հետազոտության շրջանակում առաջարկված մոտեցումները ստացել են մասնագիտական գնահատական և կիրառական

վավերացում՝ միջազգային մասնագիտական կառույցի կողմից: Մասնավորապես, «Multidimensional Assessment of Financial Results of Commercial Banks Using ESG Factors» գիտական հոդվածում ներկայացված՝ ԲՄԿ-նիսկով կշռված ակտիվների (ԲՄԿ-RWA) գործակցի կիրառումը, բանկի ղեկավար օղակի համար նախատեսված ԲՄԿ ներքին հաշվետվողականության համակարգի ձևավորումը, միջազգային մասնագիտական կառույցի՝ The ESG Institute-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Ջեյմ Ամոեդոի կողմից գնահատվել են գիտականորեն հիմնավոր, կիրառական նշանակության մոտեցումներ, որոնք ներդրվել և կիրառվել են The ESG Institute-ի կողմից իրականացվող ԲՄԿ խորհրդատվական և կառավարման վերապատրաստման ծրագրերում՝ միջազգային բանկային հաստատությունների հետ աշխատանքում (ասիական երկու և եվրոպական մեկ բանկում): Ատենախոսության շրջանակում մշակված գործիքակազմը, կատարված տեսամեթոդաբանական եզրակացությունները, կիրառական տեսանկյունից, իրատեսական են, ինչն էլ հետազոտությանը հաղորդում է թե՛ գիտական արժեք, թե՛ գործնական արդիականություն:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները
Հետազոտության հիմնադրույթների և գիտական արդյունքների շուրջ անցկացվել են աշխատանքային քննարկումներ ՀՀ ԿԲ, առևտրային բանկերի տնտեսագետների մասնակցությամբ: Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ֆինանսական շուկաներ և ինստիտուտներ» ամբիոնում: Ատենախոսության մեջ քննարկված հարցերն ու հիմնադրույթները լուսաբանվել են 7 գիտական հոդվածներում, այդ թվում՝ SCOPUS և Web of Science շտեմարաններում ընդգրկված 1 հոդվածում, ինչպես նաև 1 հոդված՝ միջազգային ամսագրում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը շարադրված է 120 էջում: Բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացության բաժնից, օգտագործված գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ **«Ֆինանսական արդյունքների գնահատման տեսամեթոդական հիմքերը»** գլխում քննարկվել են ֆինանսական արդյունքների գնահատման մոտեցումներն ու առանձնահատկություններն առևտրային բանկերում, ֆինանսական արդյունքների գնահատման մեթոդական հիմքը և տեղեկատվական ապահովվածությունը, ինչպես նաև ներկայացվել են առևտրային բանկերի գործունեության արդյունքների ֆինանսական և ԲՄԿ գործոնները: Լայն հետազոտության են ենթարկվել հայաստանյան և արտասահմանյան փորձագիտական նյութեր, գիտական հոդվածներ, ԿԲ պաշտոնական վիճակագրական տվյալներ, էմպիրիկ հետազոտության տվյալներ, Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի, ինչպես նաև IFRS միջազգային ստանդարտների, կայուն զարգացման

նպատակների շրջանակներում արժեքավոր նյութեր և հետազոտություններ: Ֆինանսական արդյունքների գնահատման գործընթացը մեկնաբանվում է տոկոսային եկամուտների և տոկոսային ծախսերի վերլուծությամբ,¹ մինչդեռ ֆինանսական արդյունքները նպատակահարմար է գնահատել՝ կազմելով համապատասխան գործառնական սխեմա:

Ֆինանսական արդյունքների վրա տարբեր գործոնների ազդեցության գնահատումը թույլ է տալիս առևտրային բանկերի ղեկավարությանն առավել արդյունավետ կերպով կառավարել ակտիվներն ու պարտավորությունները, օպտիմալացնել ծախսերը և բարձրացնել շահութաբերության մակարդակը²:

Գծապատկեր 1. Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա ազդող ներքին և արտաքին գործոնները^{3, 4}

Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա ազդող ներքին և արտաքին գործոնները

Ներքին գործոններ.

- վարկերի վերադարձելիության ապահովվածություն,
- ակտիվների և պարտավորությունների կառավարում,
- գործառնական ծախսեր և պահուստավորում, երբ պարտքային կորուստների գծով պահուստն ուղղակիորեն ազդում է ֆինանսական արդյունքների վրա,
- նորագույն տեխնոլոգիաների ներդրում և ծառայությունների թվայնացում, որոնք թույլ են տալիս նվազեցնել ծախսերը և ներգրավել նոր հաճախորդների:

Արտաքին գործոններ.

- տնտեսական միջավայր,
- արտադրության դիսկ,
- վերաֆինանսավորման տոկոսադրույք,
- իրավական կարգավորում:

¹ Казимагомедов А. А., Анализ деятельности коммерческого банка: учебник / А.А. Казимагомедов, А.А. Абдулсаламова; под ред. проф. А.А. Казимагомедова. 2-е изд., перераб. и доп., Москва: ИНФРА-М, 2023. 421 с., с. 387.

² Phan, D. H. B., Geopolitical Risk and Bank Stability. Journal of International Finance and Economics, vol.15, no.2, 2022, pp.100–112.

³ Գծապատկերը կազմել է հեղինակը՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրները՝ Kamara, A. K. A., The Study of Credit Risk Management and Its Impact on Operational Performance: Case Study of the Standard Chartered Bank in Sierra Leone. European Journal of Social Sciences Studies, vol.10, no.1, 2024, pp.170–185. See pp.174–182., Bueno L. A., Impacts of Digitization on Operational Efficiency in the Banking Sector: Thematic Analysis and Research Agenda Proposal. Emerging Banking Research Journal, 2024., pp. 4–10:

⁴ Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա ազդող ներքին և արտաքին գործոններին իրենց աշխատություններում անդրադարձել են հետևյալ հեղինակները. Галустьян К., Ильина А., Кредитные риски: механизмы оценки и пути снижения. // Банковское дело в Москве – 2014. – №12. – С. 5–8, Лаврушин О. И., Банковские риски: учебное пособие. / О. И. Лаврушин, Н. И., Валенцевой. Москва: КНОРУС, 2014. – 232 с., Воронин А. С., Национальная банковская система. / КноРус, ЦИПСиР – Москва: 2013. – 424 с., Жуков Е. Ф., Деньги. Кредит. Банки: учебник. / Е. Ф. Жукова, Н. Д. Эриашвили – Москва: ЮНИТИ–ДАНА, 2013. – 575 с.

Ատենախոսության մեջ առանձնացվել են առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վրա, ժամանակի հրամայականով պայմանավորված, ամենամեծ ազդեցություն ունեցող մի քանի հիմնական գործոններ. աշխարհաքաղաքական, առողջապահական, բանկերի տեխնոլոգիացման, բնապահպանական, սոցիալական և կառավարման ծրագրերի (ԲՄԿ ծրագրեր), ներքին սոցիալական պատասխանատվության⁵: ԲՄԿ սկզբունքների ինտեգրումը, լինելով համահունչ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին, ծառայում է որպես գործնական կառուցակարգ համաշխարհային կայուն զարգացման ցուցանիշներն առաջ մղելու համար: ԲՄԿ-ին ուղղված ներդրումային ռազմավարություններն աջակցում են երկարաժամկետ զարգացմանը՝ խթանելով պատասխանատու կառավարման վարքագիծը, շրջակա միջավայրի պաշտպանությունը և սոցիալական ներառականությունը, որոնք ընդգրկված են Կայուն զարգացման 2030թ. օրակարգում⁶:

Ատենախոսության երկրորդ՝ «**Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծության և գնահատման հիմնախնդիրները**» գլխում քննարկվել է ՀՀ առևտրային բանկերի և բանկային խմբերի ֆինանսական արդյունքների կազմի և կառուցվածքի վերլուծությունը, ֆինանսական ծառայություններից ստացված շահույթի քանակական գնահատման հիմնախնդիրները, ինչպես նաև առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների որակական գնահատման հիմնախնդիրները: Մասնավորապես հետազոտության են ենթարկվել՝ «Արդշինբանկ» ԲԲԸ-ն, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն և «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ-ն: Առաջատար բանկերի ընտրությունը կայացել է՝ հաշվի առնելով հետազոտվող տարիների ընթացքում վերջիններիս կողմից արձանագրված ֆինանսական արդյունքները, ցուցանիշները, ինչպես նաև՝ ԲՄԿ նպատակային օգտագործման շրջանակներում բարձր արտաքին ֆինանսավորում ստանալու հանգամանքները: Քանակական գործոնները, որոնց շարքում առանձնացվել է տոկոսադրույքների մակարդակը, տոկոսային և միջնորդավճարային ծախսերը, հնարավորություն է տվել ձևավորելու օբյեկտիվ պատկեր բանկի ֆինանսական վիճակի և դրա գործունեության արդյունավետության վերաբերյալ: Քանակական գործոնների խոր վերլուծությունը, միաժամանակ, խթանում է թափանցիկության մակարդակի բարձրացմանը, որոշումների պլանավորման և ընդունման որակի բարելավումը՝ դրանով իսկ ամրապնդելով բանկի դիրքը ֆինանսական շուկայում և վստահությունն ինչպես հաճախորդների, այնպես էլ գործընկերների շրջանում: Մեթոդաբանության կիրառմամբ՝ վերլուծության կենտրոնում է «Ամերիաբանկ» ՓԲԸ ֆինանսական ծառայությունների մատուցումից ստացվող շահույթի ձևավորման գործընթացը: Համեմատական վերլուծությամբ արձանագրվել է, որ ֆինանսական ծառայությունների ոլորտին բնորոշ գործոններն էապես տարբերվում են արտադրական կազմակերպությունների մոդելներից, ուստի, անհրաժեշտություն է համարվել մշակել

⁵ Adel, N., Naili M.. Geopolitical Risk and Banking Performance: Evidence from Emerging Economies. The Journal of Risk Finance, vol. 25, no. 4, June 2024, pp. 646–663.

⁶ Armen A. Hakobyan, Zaven G. Margaryan, Aspects of assessing the financial performance of commercial banks in Armenia within the scope of ESG, International Journal of Innovative Research and Scientific Studies, 8 (4) 2025, pages: 2694-2703.

տեղայնացված հաշվարկային մոտեցում, որը լիարժեք կերպով արտացոլում է ոլորտային առանձնահատկությունները: Առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների ձևավորման գործընթացում որակական գործոնները հաճախ ոչ պակաս, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ ավելի մեծ ազդեցություն են ունենում, քան քանակական ֆինանսատնտեսական ցուցանիշները: ԲՄԿ ծրագրերի հասկացությունն ամփոփում է այն չափանիշների և սկզբունքների ամբողջությունը, որի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը՝ ուղղված կայուն զարգացման ռազմավարության ապահովմանը: Այս մոտեցումն ընդգրկում է բնապահպանական, սոցիալական և կառավարման չափորոշիչների ինտեգրումը բիզնես գործընթացներում, ծառայությունների մատուցման և դիսկերի կառավարման համակարգերում: Ֆինանսական կազմակերպությունում հնարավոր է ապահովել կայուն աճ միայն այն դեպքում, երբ առկա ակտիվների, հաստատված բիզնես գործընթացների, նորարարական լուծումների և ծառայությունների օգտագործումն ուղղորդված է դեպի երկարաժամկետ մրցունակությանը և կայուն ապագայի ձևավորմանը^{7, 8}:

Ատենախոսության երրորդ՝ «**Ֆինանսական արդյունքների գնահատման բարելավման մոտեցումները**» գլխում քննարկվել են ֆինանսական արդյունքների գնահատման հեռանկարային մոտեցումները, ինչպես նաև ֆինանսական արդյունքների գնահատման սցենարային վերլուծության մոտեցումների ներդրումը և կառավարումը:

Հաշվարկային-վերլուծական տվյալների հիման վրա մշակվել և առաջադրվել է գործակիցների համակարգ, ըստ որի՝ կարելի է կատարել քանակական-որակական մոտեցումներով գնահատում: Ըստ այդմ՝

- *Ֆինանսական ծառայությունների մատուցման գների փոփոխության ազդեցությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝*

$$\Delta \Phi \text{ՄՀ}_{\text{տարի}} = \Phi \text{ՄՀ}_{\text{փ}} - \Phi \text{ՄՀ}_{\text{փն}}^9, (1)$$

որտեղ՝ $\Phi \text{ՄՀ}_{\text{փ}}$ – մատուցված ծառայությունների փաստացի հասույթն է, $\Phi \text{ՄՀ}_{\text{փն}}$ – տվյալ հասույթի նախապես պլանավորված մակարդակը:

- *Տոկոսային ծախսի փոփոխության ազդեցությունը՝*

$$\Delta S \text{Տ}_{\text{տարի}} = S \text{Տ}_{\text{փ}} - S \text{Տ}_{\text{փն}}, (2)$$

որտեղ $S \text{Տ}_{\text{փ}}$ –ն և $S \text{Տ}_{\text{փն}}$ –ն ներկայացնում են տոկոսային ծախսի՝ համապատասխանաբար փաստացի և պլանային արժեքները:

⁷ Մարգարյան Զ. Գ., Հակոբյան Ա. Ա., ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծությունը այլընտրանքային մոտեցումներով, «Տարածաշրջան և աշխարհ», 2024, №5, էջ 194-205:

⁸ Euromoney. Central and Eastern Europe Country Category Winners 2023: Best Bank for ESG in Armenia: Ardshinbank. Euromoney, 31 Oct. 2023. <https://www.euromoney.com/article/2cc8qquenh9w9atwr7bb5/central-and-eastern-europe-country-category-winners-2023-best-bank-for-ESG-in-armenia-ardshinbank> (վերջին մուտքը՝ 25.06.2025, ժամը՝ 19:37):

⁹ Այս և հաջորդող բանաձևերը մշակել է հեղինակը՝ ընդունելի մոտեցումները համադրելով բանկային համակարգի տվյալների հետ:

- Միջնորդավճարների և այլ ծառայավճարների փոփոխության ազդեցությունը՝

$$\Delta \text{ՄՎԾ}_{\text{տարի}} = \text{ՄՎԾ}_{\text{փ}} - \text{ՄՎԾ}_{\text{փն}}, (3)$$

որտեղ $\text{ՄՎԾ}_{\text{փ}}$ –ն և $\text{ՄՎԾ}_{\text{փն}}$ –ն արտացոլում են միջնորդավճարների և հավելավճարների փաստացի ու պլանային ծավալները:

- Ֆինանսական ծառայությունների մատուցման ծավալի փոփոխության ազդեցությունը որոշվում է հարաբերակցային աճի միջոցով՝

$$\Phi \text{Ծ}_{\text{ՄՄտարի}} = \frac{\Phi \text{Ծ}_{\text{փն}}}{\Phi \text{Ծ}_{\text{փ}}} \times 100 - 100, (4)$$

որտեղ $\Phi \text{Ծ}_{\text{փն}}$ –ն մատուցված ծառայությունների պլանային ծավալն է, իսկ $\Phi \text{Ծ}_{\text{փ}}$ –ն՝ նույն ցուցանիշի նախորդ տարվա կամ բազիսային մակարդակը:

- Բանկային ուղղակի ծախսերի փոփոխության ազդեցությունն արտահայտվում է հետևյալ տարբերությամբ՝

$$\Delta \text{ԲՈՒԾ}_{\text{տարի}} = \text{ԲՈՒԾ}_{\text{փ}} - \text{ԲՈՒԾ}_{\text{փն}}, (5)$$

որտեղ $\text{ԲՈՒԾ}_{\text{փ}}$ –ն և $\text{ԲՈՒԾ}_{\text{փն}}$ –ն արտահայտում են բանկային ուղղակի ծախսերի՝ համապատասխանաբար փաստացի և պլանային չափերը:

- Վարչական ծախսերի փոփոխության ազդեցությունը՝

$$\Delta \text{ՎԾ}_{\text{տարի}} = \text{ՎԾ}_{\text{փ}} - \text{ՎԾ}_{\text{փն}}, (6)$$

որտեղ $\text{ՎԾ}_{\text{փ}}$ –ն և $\text{ՎԾ}_{\text{փն}}$ –ն վարչական ծախսերի փաստացի և պլանային հաշվարկային ցուցանիշներն են:

Վերոնշյալ եղանակով վերլուծությունից բխել է, որ համադրելով բոլոր գործոնների ազդեցության ցուցանիշները, հնարավոր է գնահատել ընդհանուր փոփոխությունը շահույթում:

Հիմք ընդունելով վերլուծության համար առանձնացված քանակական գործոնները՝ մշակվել է համադրական աղյուսակ, որը թույլ է տալիս գնահատել վերջիններիս ուղղակի ազդեցությունն «Ամերիաբանկ» ՓԲԸ բանկային ծառայությունների իրացումից ստացվող շահույթի փոփոխության վրա, որի օրինակը տարածելի է նաև հետազոտության առարկա հանդիսացող «Արդշինբանկ» ԲԲԸ, «ԱԿԲԱ Բանկ» ԲԲԸ, ինչպես նաև ՀՀ մյուս 14 առևտրային բանկերի շրջանակներում: Հաշվարկի միջոցով հնարավորություն է ընձեռնվում հստակորեն տարբերակելու այն գործոնները, որոնք հանդես են գալիս որպես շահույթի աճին նպաստող դրական ազդեցություններ, և նրանք, որոնք հանդես են գալիս որպես սահմանափակող կամ նվազեցնող տարրեր: Այդ կերպ, աղյուսակում արտացոլված են ինչպես եկամտային հոսքի աճին նպաստող, այնպես էլ ծախսային հոսքը խթանող բաղադրիչները, որոնք նվազեցրել են շահույթի ընդհանուր ցուցանիշը՝ պայմանավորելով դրա դինամիկ շեղումները¹⁰:

¹⁰ Հաշվի առնելով գործոնների մեծ քանակը և սեղմագիրը թվային տվյալներով բեռնելու անհարկի լինելը՝ ցուցանիշներն ընդհանրացվել են:

Շահույթի գործոնային վերլուծությունը, «Ամերիաբանկ» ՓԲԸ, 2021-2024 թթ. (մլրդ. ՀՀ դրամ)¹¹

Ցուցանիշներ	2021	2022	2023	2024
1. Ծառայությունների մատուցումից հասույթ (արդյունավետ տոկոսադրույքով հաշվարկված տոկոսային եկամուտ + այլ տոկոսային եկամուտ + միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ)	8,281	9,785	13,173	16,380
2. Տոկոսային ծախս	32,662	35,661	39,471	49,770
3. Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս	20,532	25,945	32,008	39,571
4. Զուտ օգուտ այլ գործառնություններից	82,798	41,339	24,456	24,261
5. Այլ գործառնական եկամուտ	58,883	9,370	7,235	38,666
6. Այլ գործառնական ծախս	3,805	5,259	7,901	8,819
7. Արժեզրկումից զուտ կորուստներ	6,222	4,699	5,451	16,048
8. Վարչական ծախսեր (անձնակազմի գծով ծախսեր + այլ ընդհանուր վարչական ծախսեր)	20,535	37,016	43,308	53,844
9. Բանկային ծառայությունների մատուցումից շահույթ	23,871	54,868	57,310	73,933

Բանկի ֆինանսական մոդելներում ԲՄԿ գործոնների ինտեգրման խնդիր լուծումը պայմանավորված է հատուկ գործիքների և մեթոդաբանության մշակմամբ:

Այսպիսով, որպես ԲՄԿ մետրիկայի (չափականության)¹² ֆինանսական կառավարման հիմնական ոլորտներում ներառման մոտեցում, առաջարկվում է.

1. *ակտիվների գնահատում՝ հաշվի առնելով ռիսկը, ակտիվների և պասիվների կառավարման քաղաքականությունը, կապիտալի կառուցվածքը և կայունության սցենարային մոդելավորումը,*

2. *ԲՄԿ-RWA ակտիվների ռիսկով կշռված չափերի հաշվարկի մոդիֆիկացում՝ հաշվի առնելով ԲՄԿ ռիսկերը (տ՛ես, Աղյուսակ 2):*

Ստանդարտ կարգավորող RWA հաշվարկը կենտրոնանում է վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի վրա, սակայն առայժմ ուղղակիորեն չի արտացոլում ակտիվների բնապահպանական կամ սոցիալական ռիսկերը: Այնուամենայնիվ, այս գործոններն ազդում են պարտազանցման (դեֆոլտի) և

¹¹ Աղյուսակի հիմքում Ա. 2. Սարգսյանի, Կ. Ա. Առաքելյանի կողմից առաջարկված հաշվարկային մոտեցումներն են: Աղյուսակի կազմման համար տեղեկատվական հիմք են հանդիսացել «Ամերիաբանկ» ՓԲԸ հաշվետվական տվյալները:

վնասների իրական հավանականությունների վրա, ուստի, կարող են անուղղակիորեն ներառվել ռիսկի կշիռների ճշգրտման միջոցով:

Աղյուսակ 2.

Ակտիվների և ԲՍԿ գործակիցների համեմատական ճշգրտում (մլրդ ՀՀ դրամ, %)¹²

Ակտիվների տեսակ	Բազային ռիսկով կշռված ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)	ԲՍԿ գործակից	Ճշգրտված ռիսկով կշռված ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)	Մեկնաբանություն
Գյուղատնտեսական ձեռնարկություն	10	+0.15	11.5	Բարձր բնապահպանական ռիսկ, դեֆոլտի աճ
Կանաչ էներգիա	8	-0.05	7.6	«Կանաչ» ակտիվ, ցածր պարտաժամկետ ռիսկ
Սովորական արտադրություն	12	+0.10	13.2	Սոցիալական նորմերի խախտում, ռիսկի բարձրացում
Հոսանքի ցանցային ենթակառուցվածք	6	0	6.0	Միջին ռիսկ, փոփոխություն չկա
Ջրատար համակարգ	5	+0.08	5.4	Սոցիալական / կանաչ ռիսկերի միջին ազդեցություն

Աղյուսակ 2-ում ներկայացվող ԲՍԿ-RWA հայեցակարգը նախատեսում է ԲՍԿ ռիսկի բազմարկչի (մուլտիպլիկատորի) գործակցի կիրառում այն ակտիվների համար, որոնք գտնվում են ԲՍԿ բարձր ռիսկային կողմնորոշում ունեցող ճյուղերում կամ ունեն նմանատիպ վարկառուներ: Հայաստանի բանկերի պարագայում նպատակահարմար է ներքին մակարդակում արդեն իսկ ներդնել ԲՍԿ-RWA կառուցակարգը՝ ռիսկերի կառավարման համակարգում յուրաքանչյուր խոշոր վարկառուին տալով ԲՍԿ վարկանիշ և դրա հիման վրա ճշգրտելով դեֆոլտի/պարտազանցման հավանականությունը կամ վնասի չափը պարտազանցման դեպքում, ինչն ավտոմատ կերպով կարտացոլվի հաշվարկվող RWA-ում: Բանկին համակցված ԲՍԿ-RWA գործակիցը կարող է հաշվարկվել որպես ճշգրտված RWA-ի և բազային RWA-ի

¹² Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմնվելով հեղինակային հետազոտական մոտեցումներով հաշվարկների վրա

հարաբերակցություն. 1-ից բարձր արժեքը կհուշի պորտֆելի բարձր համախառն ԲՍԿ ռիսկի մասին.

$$ԲՍԿ-RWA=RWAPազային\times(1+ԲՍԿ ռիսկի գործակից)$$

ԲՍԿ ռազմավարության արդյունավետ իրականացումը պետք է ուղեկցվի համապատասխան ներքին հաշվետվության ներկայացմամբ՝ հասցեագրված բանկի Տնօրենների խորհրդին և բարձրագույն ղեկավարությանը:Նման հաշվետվությունն ապահովում է առաջընթացի թափանցիկություն, հիմնական ցուցանիշների վերահսկողություն՝ թույլ տալով ընդունել հիմնավորված որոշումներ: Ներկայացվում են առաջարկություններ՝ բանկերի ԲՍԿ ներքին հաշվետվության կառուցվածքի վերաբերյալ, որը ներառում է KPI-ների (հիմնական ցուցանիշների) վահանակ, վարկավորման պորտֆելի կառավարման ռազմավարական մոտեցումներ, ինչպես նաև ԲՍԿ ցուցանիշների ինտեգրում ներքին վերահսկողության համակարգում:

Աղյուսակ 3.

ԲՍԿ ռիսկի ազդեցության գնահատման և կառավարման վահանակ¹³

Մոտեցման շրջանակ	Ցուցանիշ/տվյալ	Տեսանելի ազդեցություն/հիմնավորում	Վիզուալացված նշաններ
KPI-րի վահանակ	20 հիմնական ESG ցուցանիշ, եռամսյակային հաշվետվություն	Բաժնետերերը, Տնօրենների խորհուրդը տեսնում են բոլոր ցուցանիշների դինամիկան	● (ինտերակտիվ վահանակ)
Բնապահպանական ցուցանիշների (E)	Կանաչ վարկերի ծավալ՝ 12 մլրդ դրամ, Scope 3 արտանետումներ՝ 10,000 տոննա CO ₂	Ցույց է տալիս «կանաչ» ֆինանսավորման ազդեցությունը պորտֆելի կայունությունը	● / ● սլաքներ՝ և աճ/կրճատում
Սոցիալական ցուցանիշներ (S)	ՓՄՁ վարկերի մասնաբաժին՝ 35%, հաճախորդների զուտ խթանիչ միավորը՝ 78	Կառուցում է սոցիալական, կապիտալ, չափում հաճախորդների բավարարվածությունը	● Կանաչ՝ նպատակին հասնել ● Կարմիր՝ ռիսկային
Կառավարման ցուցանիշներ (G)	Անկախ տնօրենների մասնաբաժին՝ 40%, նիստերի քանակ՝ 12/տարեկան	Հստակացվում է կառավարման թափանցիկությունը ռիսկերի վերահսկումը	● / ● նշիչներ

¹³ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմնվելով սեփական գնահատումների և հետազոտական հաշվարկների վրա:

ԲՄԿ ազդեցության գործակից (կապիտալի կշռված միջին արժեք-ԲՄԿ)	ԲՄԿ-միավոր՝ 90/100, շուկայի միջին՝ 50 → կապիտալի միջին արժեքի նվազում՝ 1,2 տ.կ.	Ներդրումների ազդեցությունը ֆինանսական արդյունքների վրա կարող է քանակական գնահատվել	● կանաչ սլաք՝ նվազում կապիտալի արժեքում
ԲՄԿ ռիսկի բազմապատկիչ	Հանքարդյունաբերական պորտֆելի մուլտիպլիկատոր= 1,15 → կապիտալի թիրախ՝ 13,8%	Նախնական ռիսկի գնահատում, կանխարգելիչ կապիտալի մշակույթ	● ծանուցման նշան՝ բարձր ռիսկի բազմապատկիչ
ԲՄԿ տվյալների ինտեգրում	Եռամսյակային «ԲՄԿ-1» հաշվետվություն՝ կանաչ ակտիվների %, կլիմայական սթրեթեյժստի կորուստներ	Տեղեկատվության թափանցիկություն ԿԲ-ի ներդրողների համար	● տեղեկատվական հաղորդման նշան՝ հաշվետվության հստակեցում

Աղյուսակ 3-ի օրինակով՝ ԲՄԿ ոլորտում առաջընթացի և ռիսկերի մշտադիտարկման համար, բանկը պետք է ձևավորի հիմնական ցուցանիշների վահանակ (KPI panel), որտեղ ԲՄԿ չափանիշները կհամադրվեն ավանդական ֆինանսական ցուցանիշների հետ: Վերոնշյալ մոտեցմամբ ձևավորված վահանակը, ներկայացվելով Տնօրենների խորհրդի նիստերում (օրինակ՝ եռամսյակային կտրվածքով), հնարավորություն կտա տեսանելի կերպով հետևելու համապատասխան ցուցանիշների դինամիկային: ԲՄԿ հիմնական ցուցանիշների (KPI) վահանակը Տնօրենների խորհրդի համար դառնում է միասնական «ինտերակտիվ տեղեկատվական հարթակ», որտեղ ղեկավարությունը տեսնում է՝ ինչպես է բանկը շարժվում կայունության նպատակների ուղղությամբ, և ինչպես է դա ազդում հիմնական ֆինանսական արդյունքների վրա:

Հաշվետվողական համակարգի հաջորդ մոտեցումը վերաբերում է ԿԲ ներկայացվող հաշվետվություններում ԲՄԿ տարրերի ներմուծման շրջանակներին: Սա ենթադրում է հաշվետվության նոր ձևերի և ցուցանիշների ներդրում, ինչի շնորհիվ՝ բանկերը պետք է կատարեն բացահայտումներ կարգավորող և հսկողական մարմինների համար՝ կենտրոնանալով ԲՄԿ գործոնների վրա: Նորարարությունը ԲՄԿ տվյալների՝ ֆինանսական հաշվետվություններում համադրելի ձևաչափով ներկայացումն է և դրանց ինտեգրումը պարբերաբար իրականացվող վերահսկողական գործընթացում:

Բանկային վերահսկողական հաշվետվողականության մոտեցում՝ ԲՄԿ գործոնների համակցված վերլուծությամբ¹⁴

Գործոն	Նկարագրություն	Օրինակներ/ Հաշվետվության ձևեր
Պարբերական հաշվետվություն ՀՀ ԿԲ-ին	ՀՀ ԿԲ են ներկայացվում ոչ միայն ֆինանսական, այլ նաև ԲՄԿ ցուցանիշներ	«ԲՄԿ-1» ձև՝ եռամսյակային • «կանաչ» ակտիվների մասնաբաժինը • Պորտֆելի խոցելիությունը՝ կլիմայական ռիսկերի նկատմամբ • Խոշոր ԲՄԿ իրադարձությունների արձանագրում
Թափանցիկության զեկույցներ/բացահայտումներ հանրային հաշվետվություններում	Բանկերի տարեկան հաշվետվություններում ընդգրկվեն ԲՄԿ-ին նվիրված բաժիններ	Հետևել միջազգային ստանդարտներին (GRI կամ նմանատիպ) -ԿԲ մշակում է ԲՄԿ գնահատման մեթոդաբանություն (scoring)՝ ներառված բանկի հուսալիության վարկանիշում
ՀՀ ԿԲ հետ երկխոսություն՝ KPI-րի միջոցով	Բանկերը և ՀՀ ԿԲ-ն քննարկում են ԲՄԿ հիմնական ցուցանիշները՝ կապված հսկողական և գնահատողական գործընթացների հետ	Տարեկան գնահատում՝ կենտրոնանալով KPI-ների հասանելիության և ապահովման վրա
Վարկանշավորում և համեմատական վերլուծություն	RAEX կամ տեղական մեթոդաբանություններ	Օգտագործել արտաքին վարկանիշներ կամ մշակել տեղական կոնկրետ ՀՀ առանձնահատկություններին իարմար մեթոդաբանություն

¹⁴ Աղյուսակը կազմել է հեղինակը՝ հիմնվելով սեփական գնահատումների և մոտեցումների հիման վրա:

Աղյուսակ 4-ի կիրարկմամբ՝ առաջարկում է.

-Կանտոնավոր կերպով ԲՍԿ հաշվետվության ներկայացում՝ ՀՀ ԿԲ,

-ԲՍԿ-ի ներառում բանկերի հանրային հաշվետվություններում,

-Երկխոսություն ՀՀ ԿԲ-ի հետ՝ ԲՍԿ հիմնական ցուցանիշների (KPI) լեզվով:

Այսպիսով՝ ձևակերպված մոտեցումները հիմք են ստեղծում բանկային կառավարման նոր հարացույցի ձևավորման համար, որտեղ ֆինանսական որոշումները կայացվում են նաև բնապահպանական և սոցիալական հետևանքները հաշվի առնելով: Դրանց փորձարկումը Հայաստանի բանկային համակարգում կարող է հնարավորություն տալ բարձրացնելու որոշակի կառույցների հուսալիության ու ներդրումային գրավչության մակարդակը:

Արդյունքում, ԲՍԿ վերլուծության ինտեգրումը բանկային գործարարության ֆինանսական գնահատման մեջ ոչ թե ժամանակավոր նորաձևություն է, այլ օբյեկտիվ անհրաժեշտություն և մրցակցային առավելություն:

«Եզրակացություններ» բաժնում ներկայացվել են հետազոտության հիմնական արդյունքները.

1. Բանկային ծառայությունների իրացման վրա ազդող քանակական և որակական գործոնների փոխկապակցված ազդեցությունը հաշվի առնելով և դիտարկելով հետազոտության համար առանձնացված վերջինիս գործոնները՝ մշակվել է գործակիցների համակարգ և համադրական աղյուսակ, որոնք թույլ են տալիս գնահատել վերջիններիս ուղղակի ազդեցությունը բանկային ծառայությունների իրացումից ստացվող շահույթի փոփոխության վրա: Նման հաշվարկի միջոցով հնարավորություն է ընձեռնվում հստակորեն տարբերակելու այն գործոնները, որոնք հանդես են գալիս որպես շահույթի աճին նպաստող ազդեցություններ, և որոնք հանդես են գալիս որպես սահմանափակող կամ նվազեցնող տարրեր: Այս մոտեցումը հնարավորություն է տվել նույնականացնել շահույթի աճը խթանող և սահմանափակող գործոնները՝ ապահովելով բանկային շահութաբերության գնահատման առավել հիմնավորված և կառավարվող մոտեցում:

2. ԲՍԿ գործոնները, որոնք վերաձվում են բանկային ռիսկերի կառավարման համապարփակ տարրի, ազդում են վարկային, իրացվելիության, տոկոսային և շուկայական ռիսկերի ինտենսիվության ու շարժընթացի վրա: Դրանց ինտեգրումը պահանջում է ոչ միայն վարկային անդերոայթինգի, ակտիվների և պասիվների կառավարման ու կապիտալի կառուցվածքի օպտիմալացման կառուցակարգերի վերանայում, այլև ռիսկով կշռված ակտիվների (ԲՍԿ-RWA) հաշվարկման մոդիֆիկացում՝ արտացոլելու բնապահպանական, սոցիալական և կառավարման ռիսկերի իրական ազդեցությունը: Այս մոտեցմամբ ձևավորվում են կապիտալի բուֆերներ (թափարգելներ), որոնք համաչափ են ԲՍԿ անորոշության մակարդակին և ապահովում են ֆինանսական կայունության առավել բարձր աստիճան, հատկապես այն պայմաններում, երբ երկրի բանկային համակարգի ակտիվների զգալի մասը կենտրոնացված է կլիմայական և սոցիալական խոցելիության բարձր մակարդակ ունեցող ճյուղերում:

3. Մշակվել և առաջ է քաշվել մոտեցում, որն ընդգրկում է ԲՍԿ հիմնական ցուցանիշների (KPI) վահանակ՝ ըստ ֆինանսական չափիչների, ինչպես նաև ԲՍԿ

վերահսկման կառուցակարգեր, որոնք ապահովում են ԲՍԿ ռիսկերի ռազմավարական մշտադիտարկումն ու կառավարման թափանցիկությունը:

4. Միջազգային կարգավորող մոտեցումների, բանկային վերահսկողության առաջատար փորձի, ինչպես նաև ՀՀ բանկային համակարգի հաշվետվական դաշտի վերլուծության հիման վրա՝ մշակվել և առաջարկվել է ԲՍԿ ցուցանիշների համակարգ, որը նախատեսված է բանկերի պարտադիր հաշվետվություններում ներառելու համար: Մոտեցումն արտահայտվել է վերահսկելի պարամետրերի մշակմամբ, որոնք հնարավորություն են տալիս Կենտրոնական բանկին համակարգային մակարդակով վերահսկելու բանկային ոլորտի ֆինանսական որակական կայունությունը: Տվյալ մոդելը Կենտրոնական բանկին կարող է տրամադրել համապատասխան գործիքակազմ՝ մակրոմակարդակում ԲՍԿ ռիսկերի մշտադիտարկման, համակարգային շեղումների և կենտրոնացումների բացահայտման համար: Սա ԿԲ-ին հնարավորություն է տալիս մակրոմակարդակում վերահսկել բանկային համակարգի ֆինանսական որակական կայունությունը և վաղաժամ բացահայտել ԲՍԿ ռիսկերը:

5. Հետազոտությամբ ուսումնասիրված որակական գործոնները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ առևտրային բանկերի երկարաժամկետ ֆինանսական կայունությունն ու մրցունակությունը պայմանավորված են ոչ միայն քանակական ցուցանիշների շարժընթացով, այլև կառավարման, տեխնոլոգիական և սոցիալական բաղադրիչների խորքային ինտեգրմամբ: Կառավարման բարձր մակարդակը, ժամանակակից բանկային տեխնոլոգիաների հետևողական ներդրումը և սոցիալական պատասխանատվության քաղաքականության համակարգված իրականացումը հանդես են գալիս որպես փոխկապակցված հենք՝ ձևավորելով ֆինանսական արդյունքների որակական աճի և ռիսկերի նվազեցման միասնական կառուցակարգ:

6. Առաջարկվել է մոտեցում, ըստ որի՝ վարկառուների ԲՍԿ կողմնորոշումը (պրոֆիլը) կարելի է ներառել կապիտալի պահանջների հաշվարկում՝ հաշվի առնելով պարտազանցման (դեֆոլտի) հավանականությունը և այդ դեպքում կորուստների մակարդակը, ինչի շնորհիվ՝ հնարավոր է բարելավել ներքին ռիսկերի գնահատման ճշգրտությունը և ապահովել համապատասխանություն Pillar 2 կարգավորող մոտեցումներին:

7. Ըստ հետազոտության արդյունքների՝ հիմնավորվում է, որ ԲՍԿ գործոնների ինտեգրումը Հայաստանի բանկային ոլորտում այլևս չի կարող դիտարկվել որպես կամընտիր նախաձեռնություն. դա վերածվում է մրցակցային առավելության և երկարաժամկետ արժեքի ստեղծման հենքի: ԲՍԿ գործոնների ներառումը բանկային ֆինանսական գնահատման, ռիսկերի և կառավարման շրջանակներում պետք է դիտարկվի որպես գիտականորեն հիմնավորված, գործնականում իրագործելի և ռազմավարական նշանակության ուղղություն, որն ապահովում է ամբողջ բանկային համակարգի կայուն և ներառական երկարաժամկետ զարգացումը:

Ատենախոսության առանցքային դրույթները հրապարակվել են հետևյալ գիտական հոդվածներում.

1. Margaryan, Z. (2023). APPROACHES TO EVALUATION OF FINANCIAL RESULTS OF RA COMMERCIAL BANKS. Economics, Finance and Accounting, (SI-1), 145-158. <https://doi.org/10.59503/29538009-2023.SI-1-145> .

2. Մարգարյան Զ., Հակոբյան Ա. (2024). «ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական արդյունքների վերլուծությունը այլընտրանքային մոտեցումներով», «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, հատոր ԺԵ, # 5 (54), էջ 194-205. DOI: [10.58587/18292437-2024.5-194](https://doi.org/10.58587/18292437-2024.5-194)
3. Margaryan Z. (2024). The Main Issues of Assessing the Efficiency of Armenian Commercial Banks Through Summary Coefficients of Financial Indicators. Messenger of ASUE, 3(78), 23-35. . DOI: [10.52174/1829-0280_2024.3-23](https://doi.org/10.52174/1829-0280_2024.3-23).
4. Armen Hakobyan and Zaven Margaryan (2025). Impact of the Russian-Ukrainian armed conflict on the financial performance of Armenia's banking sector. Banks and Bank Systems, 20(1), 334-345. [http://dx.doi.org/10.21511/bbs.20\(1\).2025.27](http://dx.doi.org/10.21511/bbs.20(1).2025.27) (SCOPUS Q2 listed & Web Of Science).
5. Hakobyan, A. A. ., & Margaryan, Z. G. . (2025). Aspects of assessing the financial performance of commercial banks in Armenia within the scope of ESG. International Journal of Innovative Research and Scientific Studies, 8(4), 2694–2703. <https://doi.org/10.53894/ijirss.v8i4.8537> .
6. Margaryan, Z. (2025). MULTIDIMENSIONAL ASSESSMENT OF FINANCIAL RESULTS OF COMMERCIAL BANKS USING ESG FACTORS. Economics, Finance and Accounting, (SI-1), 130-144. <https://doi.org/10.59503/29538009-2025.si-1-130>
7. Հակոբյան Ա., Մարգարյան Զ. (2025). «Հայաստանի առևտրային բանկերի հեռանկարների վրա ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցության ֆինանսական գործոնների վերլուծությունը», Գավառի պետական համալսարան, գիտական հոդվածների ժողովածու N 19, էջ 150-162. DOI: 10.56246/18294480 - 2025.19 -13.

МАРГАРЯН ЗАВЕН ГАРНИКОВИЧ

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ ОЦЕНКИ ФИНАНСОВЫХ РЕЗУЛЬТАТОВ (НА ПРИМЕРЕ КОММЕРЧЕСКИХ БАНКОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 «Финансы, бухгалтерский учет»

Защита диссертации состоится 26 февраля 2026 года в 14:00 на заседании Специализированного совета по экономике № 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего при Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна, 128, Республика Армения.

РЕЗЮМЕ

Актуальность темы диссертационного исследования

Актуальность темы исследования обусловлена фундаментальными преобразованиями, происходящими в мировой финансовой системе, в условиях которых факторы ESG все в большей степени становятся неотъемлемыми элементами оценки финансовых результатов деятельности коммерческих банков. Интеграция ESG-подходов в систему оценки финансовых результатов коммерческих банков находится на пересечении макроэкономического регулирования, управления рисками и устойчивого развития и, следовательно, представляет собой проблему значимой научной и практической важности. Исходя из изложенного, обосновывается актуальность темы исследования, а необходимость решения поставленных научных задач подчеркивает значимость практического применения полученных результатов.

Цель и задачи исследования

Целью исследования является разработка и обоснование теоретических и прикладных путей совершенствования подходов к оценке финансовых результатов коммерческих банков РА на основе их научного анализа, в том числе с акцентом на ESG-факторы, направленные на интеграцию принципов устойчивого развития в системы финансового анализа, управления банковскими рисками и управленческой отчетности. Для достижения поставленной цели в диссертации были сформулированы и решены следующие задачи:

- изучить теоретико-методологические интерпретации, а также финансово-экономические особенности оценки финансовых результатов в коммерческих банках;
- выявить и представить основные проблемы, показатели, методы и источники информации, используемые при оценке финансовых результатов коммерческих банков;
- проанализировать факторы, влияющие на финансовые результаты коммерческих банков;
- провести анализ состава и структуры финансовых результатов коммерческих банков Республики Армения;

- выявить основные проблемы оценки количественных факторов, влияющих на прибыльность финансовых услуг;
- представить проблемы оценки качественных факторов, влияющих на формирование финансовых результатов коммерческих банков;
- на основе проведенных исследований предложить пути совершенствования методов оценки, а также интеграции ESG-факторов в систему оценки финансовых результатов.

Объект и предмет исследования

Объектом исследования является система оценки финансовых результатов коммерческих банков и банковских групп РА. Предметом исследования являются результаты деятельности а также финансовые, экологические, социальные и управленческие инструменты и методологии, обеспечивающие устойчивое развитие, включая взаимосвязь между уровнем зрелости внедрения ESG-подходов и финансовой эффективностью.

Теоретическая и практическая значимость результатов исследования

Подходы, предложенные в исследовании, получили внешнюю экспертную оценку и практическую валидацию со стороны международной профессиональной организации. Применение коэффициента ESG-активов, взвешенных по риску (ESG-RWA), а также система внутренней ESG-отчетности для руководства банка были признаны руководителем The ESG Institute Джеем Амоедо научно обоснованными и практически значимыми и внедрены в рамках ESG-программ организации совместно с международными банками.

Основные результаты и научная новизна исследования

Научная новизна исследования заключается в разработке подходов, направленных на совершенствование процесса оценки финансовых результатов коммерческих банков Республики Армения с акцентом на финансовые, ESG-факторы и факторы прозрачности отчетности. В качестве элементов научной новизны представлены:

- разработан интегрированный подход оценки финансовых результатов и устойчивого развития коммерческих банков, охватывающий как количественные, так и качественные аспекты, с учетом внешних и внутренних экономико-правовых воздействий и с акцентом на значимость ESG-факторов;
- обоснован коэффициент ESG-активов, взвешенных по риску (ESG-RWA), как инструмент многофакторной оценки финансовых результатов в контексте устойчивого развития;
- разработан и предложен подход с внутренней отчетности и оценки результативности финансовых результатов банковской деятельности (панель KPI), ориентированный на ESG–CSR показатели, обосновывающие принятие управленческих решений;
- разработан и предложен подход оценки отчетности, направленный на обеспечение комплексной и многофакторной оценки взаимодействия Центрального банка и коммерческих банков в контексте оценки ESG-факторов.

ZAVEN GARNIK MARGARYAN

**WAYS OF IMPROVING THE EVALUATION OF FINANCIAL RESULTS (ON THE
EXAMPLE OF COMMERCIAL BANKS OF THE REPUBLIC OF ARMENIA)**

**Abstract of the thesis for receiving the degree of the PhD in Economics for the
specialty 08.00.03 “Finance, Accounting”**

The defense of the dissertation will take place at 14:00 on 26th February 2026 at a meeting of Specialized Council No. 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, operating under the Armenian State University of Economics. Address: 128 M. Nalbandyan Street, Yerevan, 0025, Republic of Armenia.

ABSTRACT

Actuality of the research

The relevance of the research topic is driven by fundamental transformations taking place in the global financial system, under which ESG factors are increasingly becoming integral elements of the evaluation of commercial banks' financial results. Although certain studies have addressed this issue, there remains a need to develop and propose approaches that enhance the effectiveness of ESG factor assessment by ensuring their measurability and practical applicability. The integration of ESG approaches into the system of financial results evaluation of commercial banks lies at the intersection of macroeconomic regulation, risk management, and sustainable development, and therefore constitutes an issue of significant scientific and practical importance. Based on the above, the relevance of the research topic is substantiated, and the necessity of addressing the proposed research problems underscores the importance of the practical application of the study's results.

The purpose and objectives of the research.

The purpose of the research is to develop and theoretical and applicable ways to improve approaches to the evaluation of financial results of commercial banks in the RA, based on their academic exams, including with an emphasis on ESG factors aimed at integrating the principles of sustainable development into the systems of financial analysis, banking risk management, and managerial accountability. To achieve this purpose, the following objectives were formulated and addressed in the dissertation:

- to examine the theoretical and methodological interpretations, as well as the financial and economic characteristics, of financial results evaluation in commercial banks;
- to identify and present the key issues, indicators, methods, and information sources used in the evaluation of commercial banks' financial results;
- to interpret the factors influencing the financial results of commercial banks;
- to conduct an analysis of the composition and structure of the financial results of commercial banks in the Republic of Armenia;
- to identify the key issues in assessing quantitative factors affecting the profitability of financial services;
- to present the issues related to the assessment of qualitative factors influencing the formation of commercial banks' financial results;

- based on the conducted research, to propose ways to improve evaluation methods, as well as to integrate ESG factors into the financial results evaluation framework.

Object and subject of the research

The object of the research is the issues for evaluating the financial move of commercial banks and banking groups in the RA, the subject of the research comprises the performance outcomes of commercial banks and banking groups in the RA, as well as the financial, environmental, social, and governance instruments and methodologies that ensure sustainable development, including the interrelationship between the level of ESG implementation maturity and financial effectiveness.

Theoretical and practical meaning of the research results

The theoretical significance of the dissertation lies in enhancing the understanding of banks' financial performance in the context of sustainable development by introducing a comprehensive ESG-based assessment approach that moves beyond a purely quantitative paradigm within the Armenian academic environment.

The approaches proposed in the study received external expert evaluation and practical validation from an international professional organization. The application of the ESG risk-weighted assets coefficient (ESG-RWA) and the internal ESG reporting system for bank management were recognized by Jay Amoedo, Head of the Executive Body of The ESG Institute, as scientifically sound and practically relevant, and were implemented within the Institute's ESG programs in cooperation with international banks.

The main results and scientific novelty of the research

The scientific novelty of the research in the development of approaches aimed at improving and refining the process of evaluating the financial results of commercial banks in the Republic of Armenia, with an emphasis on financial, ESG, and reporting transparency factors. In this context, the following are presented as elements of scientific novelty:

- an integrated approach to assessing the financial results and sustainable development of commercial banks has been developed, encompassing both quantitative and qualitative dimensions, taking into account external and internal economic and legal influences, and emphasizing the significance of ESG factors;
- the ESG risk-weighted assets (ESG-RWA) ratio has been substantiated as a tool for multifactor evaluation of financial results within the context of sustainable development;
- an internal reporting and performance evaluation approach for the financial results of banking activities has been developed and proposed (KPI dashboard), focused on ESG–CSR indicators, which support and justify managerial decision-making;
- a supervisory reporting approach has been developed and proposed, aimed at enabling a comprehensive and multifactor assessment of the interaction between the Central Bank and commercial banks, within the context of ESG factor evaluation.

